

Հաստատում եմ՝
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր՝
Ռուբեն Միրզախանյան



ԿԱՐԾԻՔ

Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի
արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի
2020թ. օգոստոսի 25 հ 1 նիստի՝
Արփինե Արմենի Միմոնյանի
«Վանանդեցիների Ամստերդամի տպարանի հրատարակությունների
գեղարվեստական հարդարանքը»
ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»
մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ

Նիստին մասնակցել են արվեստի պատմության, տեսության և
մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ
Ս. Մելիքյանը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հակոբյանը,
գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր Ա. Հակոբյանը, արվեստագիտության թեկնածու Ա. Բաղդասարյանը,
արվեստագիտության թեկնածու Ս. Գրիգորյանը, արվեստագիտության թեկնածու
Ա. Առաքելյանը, մանկ. գիտ. թեկնածու Լ. Իսկոյանը, հոգեբանական
գիտությունների թեկնածու Զ. Մալոյանը, ասիստենտ Վ. Գամաղեյանը և ամբիոնի
մյուս անդամները:

Յոհան Գուտենբերգի կողմից Եվրոպական գրատպության հիմնադրումից
հետո կտրուկ փոխվեց վերաբերմունքը գրքի նկատմամբ, մինչ այդ գոյություն
ունեցող գրքային գեղանկարչությունը վերածվեց գրաֆիկայի: Ատենախոսության

ուսումնասիրման առարկա է դարձել 17-18-րդ դարերում Ամստերդամում հիմնադրված Վանանդեցիների տպարանի պատմությունը, նաև հրատարակությունների գեղարվեստական հարդարանքի խորքային հետազոտումն ու վերլուծությունը:

Աշխատությունը պատշաճ կատարված ուսումնասիրություն է վերոնշյալ դարերի հայ գրատպության բազմակողմանի ներկայացմամբ:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հեղինակը հիմնավոր ներկայացրել է բոլոր պահանջվող դրույթները:

Առաջին գլուխը կրում է «Ամստերդամի հայկական տպարանի պատմությունը և Վանանդեցիները» խորագիրը: Այն բաղկացած է իր երեք ենթագլուխներից՝ «Հայ տպագրության սկզբնավորումը», «Ամստերդամի հայկական տպարանի պատմությունը», «Թովմաս Վանանդեցու գործունեությունը և Վանանդեցիների հրատարակություններն Ամստերդամում»: Ուսումնասիրվում է հայ տպագրության սկզբնավորման պատմությունը, ներկայացվում այնպիսի այրերի գործունեությունը, ինչպիսիք էին՝ Հակոբ Մեղապարտը, Ռսկան Երևանցին, անդրադարձ է կատարվում Ամստերդամի հայկական տպարանի պատմությանը, Թովմաս Վանանդեցու գործունեությանը և Վանանդեցիների հրատարակություններին:

Հիշենք, որ տպարանը Ամստերդամում գործել է շուրջ 22 տարի և այդ ընթացքում հրատարակել 20 գիրք, նաև՝ «Համատարած աշխարհացոյց» անունը կրող հայատառ առաջին տպագիր քարտեզը: Վանանդեցիների բոլոր հրատարակություններն աչքի են ընկել իրենց փորագրարվեստով և շքեղ պատկերազարդմամբ: Ուսումնասիրվող տոհմի ներկայացուցիչները զարգացրեցին ոչ միայն հայկական տպագրությունը, այլև զարկ տվեցին հայագիտության տարածմանը Եվրոպայում: Հետաքրքրական փաստն այն է, որ Վանանդեցիները առաջիններից էին, ովքեր տպագրեցին ժամանակակից գրականություն՝ անմասն չմնալով հասարակական կյանքից:

Երկրորդ գլխում ուսումնասիրման առարկան է Վանանդեցիների հրատարակությունների պատկերագրողման համակարգը, վերջիններիս կապը հայ ձեռագրարվեստի զարդարուն տարրերի հետ: Գլուխը կազմված է երկու ենթագլուխներից՝ «Վանանդեցիների հրատարակությունների պատկերագրողման համակարգի կառուցվածքը» և «Վանանդեցիների հրատարակած գրքերի փորագրանկարների նախօրինակները»: Տարված են համեմատություններ Հեթում Բ-ի Աստվածաշնչում տեղ գտած մանրանկարների հետ, ուսումնասիրվում են հրատարակված գրքերի փորագրանկարների նախօրինակները: Մանրամասն ներկայացվում է Վանանդեցիների հրատարակությունների բաղկացուցիչ մաս կազմող թեմատիկ փորագրապատկերները, Հովանդիայում իր գործունեությունը ծավալած՝ ծագումով գերմանացի Քրիստոֆել վան Զիխեմ Կրտսերի կենսագրությունը, վերջինիս հրատարակությունները և այդտեղ զետեղված փորագրանկարների նախօրինակները: Աշխատելով քսիլոգրաֆիայի տեխնիկայով՝ վան Զիխեմը կատարել է բազմաթիվ կրկնօրինակներ: Հետաքրքիր է, որ արվեստագետն իր կրկնօրինակներում պահպանել է հեղինակի ստորագրությունը, իսկ կողքին դրել իրենը: Ոսկանյան և Վանանդեցիների յուրօրինակ հրատարակությունները խթան հանդիսացան ուսումնասիրվող դարերի հայ գրքարվեստի զեղարվեստական նոր ձևերի մշակման, ձևավորման և զարգացման համար: Կարևորում ենք այն փաստը, որ ատենախոսության հեղինակը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Կոստանդնուպոլսում և Նոր Զուղայում նկարագրողված Աստվածաշնչերի տարբերությունները: Դրանցում դիտարկում է նկարագրողումների թեմատիկան, բացահայտվում կարևոր նոր տվյալներ:

Երրորդ գլուխը կրում է «Վանանդեցիների հրատարակությունների թեմատիկ պատկերները» խորագիրը: Սա ուսումնասիրության ամենաընդարձակ մասն է, որը կազմված է չորս ենթագլուխներից: Հետազոտության առարկա է վերցված 1702 թ. հրատարակված Շարակնոցում և 1705 թ. Ժամագրքում զետեղված սուրբգրային թեմաներով փորագրապատկերները, որոնց մեծ մասը օգտագործված է նաև Վանանդեցիների հրատարակություններում: Ենթագլուխներում թեմատիկ փորագրանկարները ենթարկվել են պատկերագրական, կերպարային, ոճական

մանրամասն վերլուծության: Առաջին ենթագլխում ներկայացվում է հինկտակարանային թեմաներ, որոնք Վանանդեցիների շտրիիվ առաջին անգամ են տեղ գտել հայ արվեստում: «Ավետարանական թեմաներով պատկերներ» ենթագլխում անդրադարձ է կատարվում Քրիստոսի երկրային և երկնային կյանքին նվիրված պատկերներին: Վերհանված է և քննության է վերցված արևմտաեվրոպական սկզբունքների կիրառությունը, մանրամասն դիտարկվում են յուրաքանչյուր տեսարանի կանոնական, նոր, արևմտյան և արևելաքրիստոնեական պատկերագրական գծերը, անդրադարձ է կատարվում ավետարանիչների կերպարներին: Սույն ենթագլխում ատենախոսը կատարել է արվեստաբանական հիմնական շեշտադրումներ: Երրորդ՝ «Սուրբ Հովհաննես առաքյալի և աստվածաբան ավետարանչի Հայտնության գրքի նկարագարումները» ենթագլխում, մի շարք առաջ բերված հարցերի կողքին նշվում է, որ Հայտնության նկարագարումների համար նախաօրինակ են եվրոպական փորագրանկարները: Չորրորդ՝ «Վանանդեցիների հրատարակությունների փորագրանկարների ոճական և կերպարային բնութագիրը» ենթագլխում, հեղինակը նշում է, որ փորագրանկարները հիմնականում վերաբերում են սուրբգրային պատկերագրական շարքին՝ կատարված դեկորատիվ մտածելակերպով: Զուգահեռներ է տարվում բնօրինակ հանդիսացող գրաֆիկական թերթերի և գրքերում տեղ գտած պատկերների միջև: Դիտարկվում և հիմնավորվում են դրանց յուրահատկությունները:

Կարևորում ենք այն փաստը, որ ատենախոսության յուրաքանչյուր գլխի ավարտին համառոտ ներկայացված են հիմնական դրույթները:

Եզրակացություններում տասներկու կետով արտացոլված են համակողմանի վերլուծության արդյունքում կատարված եզրահանգումները:

Ընդհանուր օգտագործված գրականության ցանկը ներառում է շուրջ 216 աղբյուր: Հավելվածում զետեղված է 146 վերատպություն, որոնք արտացոլում են աշխատանքում ուսումնասիրվող նյութը: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությանը:

Ընդհանուր առմամբ, ատենախոսությունում կատարված է թեման լուսաբանող հիմնարար ուսումնասիրություն, որում պահպանված են գիտական բոլոր անհրաժեշտ կանոնները:

Աշխատանքին ներկայացվող դիտողությունները կրում են տեխնիկական բնույթ, որոնք շտկելու դեպքում ցանկալի կլինեք ատենախոսությունը տեսնել առանձին հատորի տեսքով:

Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որն իր արտացոլումն է գտել ութ գիտական հոդվածներում և մեկ ուսումնասիրությունում: Աշխատանքը բավարարում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ հեղինակ Արփինե Արմենի Միմոյանը արժանի է ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի իր հայցած գիտական աստիճանին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ՝

Սաթենիկ Մեղիքյան

Սաթենիկ Մեղիքյանի

ստորագրությունը հաստատում եմ



Մարիամ Իսախրյան